



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Զ. — ՇՐՋԱՆ Ի.

1887

ՏԱՐԻ Ի. ՅՈՒՆԻՍ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԾԽԱՐՀԱՍ ՑԱԻՑԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՅԵԼԻՆ Է.

Ա. ԿՐԶՐ. ԺԳ. 12, 13

— 0 —

Նա կայ և իշխումէ միշտ և յաւիտեան. Նորա առաջ
ժամանակները բոլորէնք են, և Նորա սէրը միշտ նոյն է մնում,
առանց փոխուելու: Նորա ձեռքի գործն, որ սկիզբն ու վերջ
չունի, մեր աչքի առաջն է ու ճշմարտութեան մի մեծ թագա-
ւորութիւն է մեզ համար:

Մենք դեռ ևս ստոր աստիճանի մէջ ենք, դեռ ևս չենք բարձ-
րացել մեր հոգւովն. բայց կոչուած ենք ամենաբարձր աստի-

ճանի հասնելու, երբոր մի օր մեր երկնաւոր Հօր մօտը կերթանք: Այժմ դեռ հողի հագուստ է մեր վրան, նեղութիւն ու վէրքեր կրելուց ազատ չենք. սպասում ենք յարութիւն առնելու:

Այս աշխարհիս միջին ձորովը գնացած ժամանակդ՝ միայն մի ծռուիւր ճանապարհիցդ ու դուրս մի՛ գալ. շատ չի քաշիլ, քո փափագիդ կհասնեն: Այն ժամանակ երանելի, այն, երանելի կլինի նա, ով որ այս կեանքումս պատերազմել է աստուածային իրադաշնութեան համար. նա փառաւոր յաղթութիւն արած կլինի:

Պեղեցիկ նմանութիւն ենք տեսնում Քրիստոսի իւր երկնային վարդապետութեանը մէջ մեզ յայտնած մարդասէր Հօր՝ ու հրաշագօր Աստուծոյ մէջ, որ իրան յայտնուի մէջ մեզ իշխանութեամբն ամեն ազգերին, ամեն դարերին՝ բնութեան փոփոխ փառաւորութեան մէջ: Անիմանալի և համատարած իշխանութեամբ իշխում է նա հոգեղէն էակների թագաւորութեան մէջ, մեր մտքին անհասանելի և անըմբռնելի մեծութեամբ իշխում է հրանիւթ երկնային մարմնոց աշխարհների կարգումն, որ ի յաւիտենից իրանց համար կարգաւորուած ու որոշուած ճանապարհներով մեր գլխի վրայ ման են գալի: Նւ հոյնալէս մեծ ողորմութեամբ իշխում է նա անմահ հոգիների թագաւորութեան մէջ, ուր որ իւր կոչը գէպի երանական կեանք բոլոր արարածների վերայ խոր տպաւորութիւն է անում:

Որչափ որ աւելի եմ մտածում Յիսուսի Քրիստոսի յայտնածների վերայ, որչափ որ աւելի երկար ժամանակ եմ խորամուխ լինում ու նկատում անվերջ արարածներն, այնքան ինձ աւելի մօտիկ եմ զգում Աստուածութիւնն—այնչափ աւելի կենդանի կերպով եմ զգում աստուածային զօրութիւնն. այստեղ անշուշ մի մեքենայի գործողութիւն չէ, այլ բոլոր տեսակ տեսակ հողաստեղծ արարածների մէջ և գաղտնի զօրութիւնների ամեն գործունէութեան մէջ յայտնի երևում է մի՛ կամք ամենակարող զօրութեան, մի՛ ամենակարող զօրութիւն լի իմաստութեամբ:—Իայց աստուածային բնութիւնն երբէք չեմ կորոզանում քննել: Աստուծուն, եթէ ես քննել

կարողանայի, էլ Աստուած չէր լինիլ նա. ինչու որ իմ հոգւոյս քնութիւնն անգամ ինձ համար մի մութ հանելուկ է: Մի քննիր թէ ինչ է Ամենաբարձրելոյ էութիւնն. ինչու որ Նորա ստեղծած ամենափոքր արարածի էութիւնն անքննելի է: Այլ յանդուգն մարդ, քանի որ աւելի ես կանգնում քննելով մտիկ տալի արեգակի պայծառութեանն, այնքան մթնում են աչքերդ:

«Մեր Գիտութիւնն այս աշխարհումն անկապար է», ասում է սուրբ առաքեալն Պօղոս՝ Քրիստոսի իմաստուն աշակերտն. «այսպէղ Կեանք էն, Դէն, Կայելւօր ինչպէս ինչ, Բայց Դէ որ Դէն յանդիման կ'աւանդեն: Այժմ հասկանում եմ ես անկատար ու թերի կերպով. բայց այն ժամանակ կ'ճանաչեմ ես Նորան, ինչպէս որ նա ինձ ճանաչեց: Բայց այժմ մնում են հաւատ, յոյս, սէր, այս երեքը. իսկ դրանց մէջ ամենից մեծը սէրն է»:

Այո, այս աշխարհքս, որ ինձ տուած է իբրեւ ընակութեան տեղի մի կարճ ժամանակուայ համար, յաւիտենական կեանքի մի մութ հայելին է միայն: Նիստ առաւ եմ տեսնում ես այս տեղ այն՝ ինչ որ մի օր հրաշալի կապակցութեան մէջ պիտի տեսնեմ հիացմամբ: Ինչ որ այս տեղ ինձ համար յոյս է, որ ունիմ, այնտեղ կատարումն կդառնայ. ինչ որ այս տեղ ինձ համար մի թեթեւ նախազգացումն է, այնտեղ իբրեւ իրականութիւն իմ շուրջս կ'փայլի: Եւ կենաց Աստուածն, որին ես հասկանում եմ այստեղ իւր փառքը յայտնելու մէջը միայն, մի օր ինձ կ'յայտնուի իւր բոլոր պայծառութեամբն, երբ որ իմ անմահ հոգիս կ'լուծուի Նորա և Նորա երջանկութեան մէջ:

Այս աշխարհիս մէջ ապրելն ու միւս աշխարհի մէջ ապրելն, այս աշխարհումս ունեցած մեր կեանքն ու յաւիտենական կեանքն՝ ջոկ ջոկ բան չեն, երկուսն էլ միասին մէկ կեանք են, երկուսն էլ մի ամբողջ կեանք են, միմեանց կտորն են, որ չեն կտրւում, այլ միւս կեանքն այս կեանքիս անմիջական շարունակութիւնն է: Եթէ իմ աչքիս տեսողութիւնը շատ սուր լինէր, հոգի ակօսի մէջ ընկնող փոքրիկ սերմումը կտեսնէի արդէն ահագին եղեւինն, որ հարիւր տարուց յետոյ մի մեծ տարածութեան վերայ ստուեր է քցում: Ամենայն ինչ յառաջագիմութիւն է, ամենայն ինչ զարգացումն է: Աստուծոյ կամքովն այս մեծատարած աշխարհիս մէջ կայ մի ընդհանուր

մշուումն, մի ձգումն կեանք ունենալու, մի ծածուկ ոյժ հոգի-
աւորութիւն, շնչաւորութիւն, Այս ոյժը մենք միշտ նկատում
ենք. այն ոյժն, որ ամեն բանի մէջ կայ, անդադար նորոգում է
առարկաների այլ և այլ կերպը, Այս ոյժը գործում է կարգէ
դուրս զօրութիւնով ամեն մի սերմի միջից, սնունդ է ծծում
ամեն մի տարերքից, միաւորւում է արդէն վաղուց փտած
բանի հետ, նորա մէջ իւր կեանքը տարածում և առաջ է բե-
րում մի բոյս, որոյ գեղեցկութիւնը գարնան օրերում պարա-
րում է մեր աչքը, որոյ անուշահոտութիւնը մեզ զմայլեցնում
է, կամ որոյ պտուղները մեզ համար անուշահամ կերակուր
են դառնում:

Կեանք ունենալու այս հակամիտութիւնը կայ կենդանական
էակների մարմնի ամեն մասերի մէջն, այնպէս որ մի մասը՝ ամ-
բողջից կտրում, բաժանում ես թէ չէ, կրկին մի նոր կեանք
է առաջ բերում արդէն կտրուած, փչացող կտորի մէջն: Ան-
համար վաքրիկ որդներ է դառնում այն կտրած կտորը, և այս
որդներն իրանց կեանքի կարգ ու կանոնը աւերութեամբ, վեր-
ջապէս էլի լուծւում են, որ իրանց փտած դրութիւնից յա-
ռաջ եկող միշտ ստեղծող, և անդուլ՝ անդադար շարունա-
կող կենսական զօրութեան նոր նիւթ տան նոր ծնունդների
համար: Այսպէս շարունակւում է այս փոփոխութիւնն՝ ու
անվերջ կերպով: Զւերը ոչնչանում են, բայց ամեն բան պէտք
է կրկին նիւթ տայ նոր ստեղծումների: Մեր մարդկային մար-
մինն էլ մշտական ներքին գործունէութեան մէջ է գտնւում,
ծառայելով մեր անմահ հոգւոյն: Այս ներքին գործունէու-
թիւնը հոգւոյ համար է կենդանութիւն տալի մարմնոյ նրբագ-
գաց ջղերին, նորա համար է շուռ բերում արիւնն երակների
բաւիղական անցքերովը, նորա համար է ծծում սնունդ տա-
րերքից, աչքումը լուսով փայլում, ծաղիկների հոտը առնում
և արտաքին աշխարհի հնչիւնները մինչև սրտի խորքը տա-
նում հասցնում:

Իսկ երբ որ աշխարհն մեր մէջ, մեր հոգին, երկրաւոր ծած-
կոյթն իւր վրայից դէն է քցում, երբ որ այս մտածող,
ազատ կամք ունեցող, ինքնաբերաբար շարժող և իրան յատուկ
օրէնքներովը գործող էակն, որին որ մենք մեր հոգի անունն
ենք տալի, մեր մարմնից բաժանւում է, այն ժամանակ մար-

մնոյ հպատակութիւնն ու ծառայութիւնը դադարում է, մարմնոյ սկզբնական ուժերը ցրվում են՝ անտէր ծառաների նման, որ դարձեալ հպատակուին, հնազանդուին նոր կեանք ու նոր կենդանութիւն ունենալու և ստանալու օրէնքին, եւ ինչպէս որ նորանք գտնում են հիւթեր, որոց հետն այնուհետեւ միաւորուած պիտի լինին, այսպէս էլ բոլոր ուժերից ամենաազնիւը, անմահը, և դէպի յաւիտենական կեանքը կանչուած հոգին նոր ծածկոյթ պիտի ունենայ վրան, նոր ծածկոյթով պէտքէ պատուի: Նա չի քնում, չի մեռնում՝ երբ որ իւր առաջուայ մարմինը լուծվում, աւերվում, փշանում է, նա էլ շարունակում է զարգանալ բնական ընթացքով, որ աւելի կատարեալ ու աւելի փառաւոր կերպով գործի յաւիտենական կեանքումն: Ոչ ճշման չէ՝ մեռնում: Մեռել ասածդ ի՞նչ է որ, եթէ ոչ այլափոխուիլ, փոփոխուիլ, ուրիշ բան դառնալ: Այսպէս թառամած ծաղիկը փոխվում է, հող է դառնում, և նորից՝ նոր ծաղիկների մի մասն է դառնում: Ստեղծուած բաների կապակցութիւնից ոչինչ չէ կարող կտրուիլ, դուրս հանուել ու ոչնչանալ. ամենից աւելի անկարելի բան է, որ Աստուծոյ ազգակից մեր հոգին այդ վիճակն ունենայ: Նա էլ, երբ որ մարմնոյ հետ ունեցած միաւորութիւնից բաժանվում է՝ ու էլ կապ չէ ունենում հետը, նա էլ նոր յառաջադիմութեան, նոր զարգացման ճանապարհումն է լինում: Այսպէս մեզ համար արդէն այս աշխարհ էլ յաւիտենական կեանքի, թէ և ոչ պարզ ցոյց տուող, հայելի՞ն է:

Ա՛յլ կարող է աչքովը տեսնել ու չափել Աստուծոյ անեղբ տիեզերքն: Երկնային մարմիններից տեղեկութիւն ունեցող գիտնական աստեղաբաշխն անգամ, իւր ամենալաւ կերպով դիւնուած աչքովն՝ աշխարհիս սահմաններն ոչ մի ժամանակ տեսնել կարող չէ: Բայց աւելի հեռու ումն, տեսանելի աշխարհների ետեւումն, որ հեռագիտակներով կարող ենք տեսնել, աւելի հեռաւոր՝ մեզ անծանօթ երկինքներից փայլում է մի գեղնագոյն լոյս որ շատ աւելի հեռուումը գտնուող աստղերի ցոլացումը կարող է լինել, այնպիսի աստղերի, որ մահկանացու մարդոց աչքն երբեք չէ կարող տեսնել, որովհետեւ այնպիսի տարածութիւնների մէջ են մանգալիս, որ մեր աչքից միշտ ծածկուած պիտի մնան:

Հաշուել են լուսոյ ճառագայթի զարմանալի արագութիւնով տարածուիլը. հաշուել են այն հեռաւոր տարածութիւններն, ուր որ արեգակն ու իւր մոլորակները նորա չորս կողմը ման են գալիս, այն աստղերն, որ՝ մեզ նման՝ նորանից լոյս են ստանում: Բայց ամենաշատ երկնային մարմնոց համար ոչ բան ասել կարող ենք և ոչ հաշիւ ցոյց տալ թէ՛ ինչ և որքան հեռաւոր տարածութեան մէջ են: Կան այնպիսի աստղեր, որ հարիւրաւոր տարիներով առաջ, կարելի է, հանգած են, ու մենք դեռ էլի տեսնուամենք, որովհետեւ նորանց լոյսն երկնքի անսահման տարածութիւնով դեռ էլի մինչև մեզ գալու ճանապարհումն է: Կարելի է որ, մեզանից՝ լեզուով չպատմուելու հեռաւորութեան մէջ նոր արեգակներ երևեցած լինին, բայց մենք չենք տեսնում, որովհետեւ նորանց լոյսը՝ հեռութիւնից՝ դեռ չէ հասել մինչև մեր աչքն: Այսչափ մեծ է տիեզերքն: — Ոչ թէ տիեզերքն, ինչ եմ ասում ես, այլ մեծ է մինչև անգամ նորա մի փոքրիկ մասն էլ, որ մենք մեր երկրիցը տեսնել կարող ենք: Նրկիրս, արեգակն և ամեն բան շարունակ լողում են երկնքի մեծ ծովի մէջ, ու հաւանականաբար՝ ման են գալի մի ասելի մեծ արեգակի շուրջը, բայց որ մեր տկար աչքովն ամենեւին տեսնել չենք կարող, մեզանից ծածկուած պիտի մնայ: Մեր երկրագունդն՝ ամեն մի ժամում իւր շարժած միջոցին, թէև մենք չենք զգում, շարունակ պտտւում է մօտ տասը հազար մղոն տարածութիւն, ամեն մի օր՝ երեք հարիւր յիսուն հինգ հազար մղոն: Այսպէս էլ մեծ մասն ուրիշ աստղերի: Այնչափ մեծ են միմեանց հետ կապ ունեցող այս ամեն աշխարհների իրարից ունեցած հեռաւորութիւններն, որ մենք շատ հարիւրներով տարիների մէջ մեր արած դիտողութիւններից յետոյ՝ հազիւ կարողանում ենք տեսնել նոցա շարժելն իրանց, հաւանականաբար, կետրոնական համարուած կէտի շուրջն:

Բայց և այնպէս այս անթիւ երկնային մարմիններն, որոնք ամենն էլ չափազանց մեծ են մեր փոքր երկրագնդից, որոյ վերայ մենք ապրում ենք, էլի մի զարմանալի կերպով կապուած են իրար հետ: Նրանց ձեռովն ու նմանութիւնովն իրար ազգակից լինելով՝ փոփոխակի իրար լոյս են զրկում, և իրանց մէջ եղած տարածութիւնը լցնում են մի եթերական նիւթով, որ իրանցից դուրս է գալիս և կարելի է, նոյն նիւթն է, որ

փայլում է մըրկի ամպի մէջ, որ ճառագայթում է շողշողացող հիւսիսային արշալուսի մէջ:

Ո՛հ, աշխարհիս շատ գովում ճարտարագործի ամենագլխաւոր ճարտարարուեստ գործը ի՞նչ է որ տիեզերքի մեծ շէնքի առաջն, ուր որ Աստուծոյ աթոռն է:—Նւ այս ամեն յիշածներս մի միութիւն են միայն, միմեանց հետ կապուած, իրար մէջ հիւսուած, իրար ազգակից մի ամբողջ բան: Որին մի ամենակարող զօրութիւն, մի սէր է կառավարում ու պահպանում: Ինչպէս որ մի ճնճղուկ առանց Աստուծոյ կամքին կտրից վայր չէ ընկնում, նոյնպէս էլ չէ կարելի, որ այս աշխարհներից մէկը կորչի, կամ էլի մատնուի անգոյ ոչնչութեան, որից որ Աստուծոյ ստեղծող խօսքը գոյացրել է: Ամենայն կեանք յառաջ է գալիս յաւիտենական բուն աղբիւրից, ուր որ արգելք, դադարում չկայ: Կեանքն ու ոյժն անթիւ անհամար արարածների մէջ այնպէս է տեսնւում, ինչպէս որ մեր մարմնոյ մէջ երակների զարկն, և ոչ մի տեղ մահ չկայ:—Ուրեմն ես էլ կեանք ունիմ և ապրում եմ: Ես էլ տիեզերքի արարածների հետ ունեցած միութեան կապից ոչ մի ժամանակ քանդուել ու կորչել չեմ կարող: Ես էլ Աստուծոյ շէնքի մի բնակիչն եմ և կարող եմ հայր, ի՞ հայր, անուանել ամենասուրբ Էակին, Որոյ շնչովը կան ու շարժում են բիւրաւոր արեգակները: Այնպէ՛ք է յաւիտենական կեանքը: Տարբերութիւն չկայ, որովհետեւ ամենայն բան մի միութիւն է, մի ամբողջութիւն է: Ժամերն ու տարիներն, որ ես ապրում եմ այս երկրագնդիս վերայ, յաւիտենական կեանքի մասերն են, ովկիանոսի կաթիլներն, որ իրարից անբաժան են:

Այսպէս արդէն այս աշխարհումս տեսնում եմ ես յաւիտենական կեանքը՝ թէ՛ և պարզ ցոյց չառնող մի հայելու մէջ: Ես զգում եմ, որ միայն այս երկրիս, այս շուտ անցկացող, փուչ կեանքիս չեմ կարող պատկանել, այլ՝ ուրիշ մեզ մերձաւոր աշխարհների էլ, թէ՛ ես աւելի կատարեալ, աւելի պայծառացած եղբայրներ էլ ունիմ, արեւակիցներ, ազգականներ, մտերիմներ իմ երկնաւոր Հօր մեծ ու շատ հեռաւոր տանը մէջ:

Որպիսի բազմութիւն պիտի լինի կեանքի ու գոյութեան կողմանէ երկնքի այն՝ մեր գլխի վրայ գտնւող մեծ աշխարհնե-

րուամբ: Ի՞նչ աստիճանաբար միշտ մեծ յառաջադիմութիւններ
 դէպի կատարելութիւն և երջանկութիւն, որոյ մասին ես մի
 շատ վեր ի վերոյ փառափար անգամ ունենալ չեմ կարող:
 Արդէն այստեղ՝ այս աշխարհումս տեսնում եմ զարմանալի
 պէսպիսութիւն՝ թէ մեծ և թէ փոքր բաների մէջ: Արդէն այս-
 տեղ տեսնում եմ ես՝ նկատելու արժանի կերպով՝ որ ամեն
 բանի մէջ տարբերութիւն ու անհաւասարութիւն կայ մի-
 մեանցից՝ հենց՝ միայն կենդանեաց մէջ մեծ տարբերութիւն,
 մեծ անմահութիւն կայ կենսական ուժերի և սնունդի կող-
 մից: Ի՞նչպէս խեղճ է խեցին, որ ծովի ափի ժայռին է կաշում՝
 բզեզի մօտն, որ ոսկեգոյն թւերովը թռչում է գարնան գե-
 ղեցիկ օդով: Արքան աւելի բարձր ու գերազանց է խելօք
 փիղը, հասկացող ձին, մարդ ու հաւատարիմ շունը՝ կենդա-
 նեաց թագաւորութեան մէջ եղած միւս արարածների հետ
 համեմատելով: Բայց ամեն կենդանեաց բնազդումն էլ ի՞նչ մի
 բան է մարդ ուս բանականութեան առաջ: Սակայն յաւիտե-
 նական իմաստութեան ստեղծագործող զօրութիւնը մի՞թէ
 մարդ ով է վերջա՞ում: Մի՞թէ բոլոր տիեզերքի մէջ ամենակա-
 տարեալ էակը նա պիտի լինի, ինչ է որ այս երկրագնդիս վերայ
 եղած բոլոր արարածներից ամենագերազանցն է: — Բայց ի՞նչ
 է մեր երկրագունդն, եթէ ոչ երկնային տարածութեան մէջ
 գտնուած աստղերից ամենափոքրն, մինչև անգամ մեր արե-
 գակն ամենափոքրն է ուրիշ արեգակների մէջ, որոնք որ այն-
 պիսի հեռաւոր տարածութիւնների մէջ են, որ ոչ մի մարդ
 հաշուել չէ կարող, բայց իբրև առաջին կարգի մեծ աստղեր
 փայլում են երկնքում: Եթէ որ այս հանգամանքներն աչքի
 առաջ ունենալով, պէտք է իմ դատողութեանս վճիռը տամ,
 որ անհետեւանք չմնան իմ մտածմունքս ու արած համեմա-
 տութիւններս, այն ժամանակ մարդս Աստուծոյ արարածների
 մէջ դեռ ամենաստորինը պիտի երևի իմ աչքիս. մեզանից
 աւելի բարձր տեսակ էակներ կան դեռ, որոնց առաջը մենք
 փոշու պէս կանհետանայինք, եթէ որ նորանց մօտը կանգնե-
 ի՞ք, և որոց իմաստութիւնը, կատարելութիւնն ու զմայլումն
 մեր ունեցածիցը գերազանց է, ինչպէս որ մեր ունեցածը գե-
 րազանց է ջրի կամ ուրիշ հեղանիւթերի մէջ գտնուած՝ հա-
 սարակ աչքով անտեսանելի ամենափոքրիկ կենդանիների իմաս-

տուլթիւնից, կատարելութիւնից ու զմայլումից, այն աննշմարելի ու շատ մանր կենդանիներինն եւ՝ ասում, որոնց որ մենք անգիտութեամբ մեր ռաբի տակն ենք կոխում։

Այս աշխարհս յաւիտենական կեանքի հայելին է, թէւ պարզ ցոյց չտուող հայելին, բայց որչափ բան եւ՝ հասկանում ես նորա մէջն, իմ իմացածս այս կեանքումս մի անկատար բան է միայն, բայց ինչպէս բարձրացնում է հոգիս այս իմ ունեցած փոքր տեղեկութիւնս։ Երբ որ իմ բանականութիւնս երկնային արարածոց մեծութեան մէջ կորչում է, իմ փոքրկութիւնս, իմ ոչնչութիւնս եւ՝ զգում, և մի և նոյն ժամանակ մի քաղցր միսթարութիւն էլ եւ՝ զգում, որ ես էլ Աստուծոյ զաւակ եմ, որ իմ մէջս կայ ու մտածում է աստուածային մի բան։

Երբ որ այս բարձր դրութիւնից, որ Աստուծոյ կամքովն ունիմ, ցած եւ՝ մոխի տալիս իմ կեանքիս վերայ, ինչպէս ցաւ եւ՝ զգում։ Մտածում եմ թէ՛ միշտ իմ վսեմ կոչմանս համեմատ կեանք եմ արդեօք անցկացրել։ Յիրաւի՞ ապրել եմ աւելի ապագայի և յաւիտենականի համար, քան թէ ժամանակաւոր և անցաւոր կեանքի համար։ Աւելի հոգս եմ արել իմ անմահ հոգեւ համար, թէ՛ մահկանացու մարմնիս համար։

Կարմրելով իմ խղճիս՝ իմ անկաշառ դատաւորիս առաջ, կարմրելով ամենագէտ և ամենասուրբ Ստեղծողիս առաջ, աչքերս ցած եմ քցում։ Մտիկ էի տալիս, այն, այն հայելումէջ, որ ինձ ցոյց էր տալիս յաւիտենական կեանքը, թէւ ոչ պարզ, բայց մտիկ տալիս ու նորա մէջ տեսածս իմ սիրտս չէր շարժում, ես անտարբեր էի մնում։ Ես զգում էի, որ իմ առաջը մի բարձր նպատակ կայ, որին պէտք է նուիրուիմ ու ջանք անեմ հասնելու իմ երկրաւոր կեանքիս մէջ, — բայց դէպի Աստուծոյ արքայութիւնը չբարձրացայ իմ վարքովս ու գործովս, այլ ողորմելի կերպով շատ անգամ ցածրացայ, իջայ դէպի զգայականութեան թագաւորութիւնն։ Իմ բոլոր ջանքս ու աշխատութիւնս՝ իմ ուտել խմելու համար, փառքի ու պատուոյ ետեւից ընկնելու համար էր, որ այսօր կայ՝ վաղը չկայ։ Իմ միտքս ու հոգսս աւելի այն էր, որ ինձ նման սխալական մարդիկն ինձ ու իմ գործս հաւանեն, որ մի նշանակութիւն չունի քան թէ այն, որ ինձ արժանի անեմ իմ Աստու-

Ժողովի վերայ քաղցր աչքով մտիկ տալու ու իմ կոչմանս դէպ ի յաւիտենական կեանքն: Ա՛խ ինչպէս շատ անգամ ինքս իմ աչքիցս ընկնում էի ու ինձ մարդ չէի համարում: «Կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է, բարձր ձայնով ասացիր Դու ինձ, ո՞վ իմ սուրբ և Աստուածային ուսուցիչ Յիսուս Քրիստոս, որ հոգիների աշխարհն այնպիսի լուսով լուսաւորեցիր, որ այս աշխարհիցս չէր, — ես լսեցի Քո ձայնդ, ո՞վ քաջ հովիւ հոգիների, բայց ետեւից չընկայ:

Ո՞վ հաւատ, յոյս, «էր, դուք, որ երկնքի դստերքն էք, դուք մխիթարեցէք իմ սիրտս: Հետո եկէք այն երկար ճանապարհն, որ պէտք է անց կենամ, գնամ: Ո՞վ հաւատածային հաւատ, զօրացուր ինձ ու բարձրացուր իմ հոգիս, որ աշխարհիս հոգսերի, աշխարհային ցանկութիւնների յաղթահարող ոյժը չկարողանայ ճնշել նորան, որ իմ իսկական կոչման հասնել չդժուարանամ: Ինձ ազատիր, երբ որ իմ հոգիս տատանւում է ժամանակաւորի ու յաւիտենականի մէջ, երբ որ ուզում է անասնականը գերադասել աստուածայինին: Ազատիր ինձ, երբ որ իմ կիրքս ուզում է ինձ յաղթել, և իմ զգայականութիւնս ուզում է իմ սկզբունքներիս ու պարտաւորութիւններիս վերայ իշխանութիւն բանեցնել: — Նւ դու, ո՞վ յոյս, յոյս, որ ինձ նոյն իսկ Աստուածանից ես տրուած, յոյս, որ ինձ Քրիստոսի բերանովն ես եկել, մի՛ թողնիլ ինձ իմ կեանքիս ամենադժուար ժամերում: Երբ որ իմ հոգուս արդարութեանը պատճառով ամեն բան զոհեմ, երբ որ առաքինութեանս պատճառով խեղճ, երեսից ընկած ու անտէր մնամ, երբ որ անկիրթ, անտաշ մարդիկ ինձ ծաղր անեն — ո՞վ յոյս յաւիտենական կեանքի ու շնորհաց, ինձ մի՛ թողնիլ:

Իսկ դու՝ ո՞վ սէր, որ ամենասիրելի մայր ես ամենայն առաքինութիւնների և աղբիւր կատարելութեան, ներգործիր իմ մէջ, որ աստուածսիրութիւնն ու մարդասիրութիւնը իմ մէջս վառուեն, բորբոքուեն, որ բոլորովին քեզանով ու քո մէջդ լինի իմ կեանքս ու կենդանութիւնս: Միայն նա է Աստուծոյ մէջ կեանք ունեցողն, ով որ սիրով ու սիրոյ մէջն ունի իւր կեանքը: Յաւիտենական կեանքի ճանապարհն արդէն այս կեանքումս՝ միայն նորա համար է բաց, ով որ սիրով ու սիրոյ մէջն է ապրում, որոյ բերկրանքի նախաճաշակը զգումէ նա, թէ այս կեանքումս արդէն ունի: Պատճառ որ այնտեղ բնակող ու իշխող և ամենին երջանկացնող սիրոյ անունն է Աստուած:

Թարգմ. գերհաներէէն Քրիզոս Եպիսկոպոս Աղափիրեանց: